Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2023-2024 ուստարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է Սմբատ I-ը պայմանագիր կնքել Բյուզանդիայի հետ. 0,5 մ.
   ա/ 890 թ. բ/ 891 թ. գ/ 892 թ. դ/ 893 թ.
2. Ո՞ր թվականին է մահապատժի ենթարկվել Արտավազդ II-ը. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 34 բ/ Ք.ա. 32 գ/ Ք.ա. 31 դ/ Ք.ա. 27
3. 948 թ. Անանիա Մոկացին որտե՞ղ է տեղափոխել կաթողիկոսական աթոռը. 0,5 մ.
   ա/ Անի բ/ Աղթամար գ/ Բագարան դ/ Կարս
4. Ե՞րբ է խալիֆը ապստամբությունը ճնշելու համար Հայաստան ուղարկել Բուղային. 0,5 մ.
   ա/ 850 թ. բ/ 851 թ. գ/ 852 թ. դ/ 853 թ.
5. Ո՞ր քաղաքն է 1216 թ. գրավել Լևոն II-ը. 0,5 մ.
   ա/ Տարսոն բ/ Անտիոք գ/ Այաս դ/ Կոռիկոս
6. Ե՞րբ է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնվել մտցնել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ կազմի մեջ. 0,5 մ.
   ա/ 1988 թ. հունիսի 13 բ/ 1988 թ. հունիսի 15 գ/ 1988 թ. հունիսի 18 դ/ 1988 թ. հուլիսի 18
7. Ե՞րբ են դադարել հայ-թաթարական բախումները. 0,5 մ.
   ա/ 1906 թ. օգոստոս բ/ 1906 թ. սեպտեմբեր գ/ 1906 թ. հոկտեմբեր դ/ 1906 թ. նոյեմբեր
8. Քանի՞ կետերից է բաղկացած Իսրայել Օրու կազմած «Պֆալցյան» ծրագիրը. 0,5 մ.
   ա/ 16 բ/ 18 գ/ 32 դ/ 36
9. Ե՞րբ է կառավարել Մենուա թագավորը: 0,5 մ.
10. Ո՞ր թվականներին է գահակալել Արտավազդ III-ը: 0,5 մ.
11. Ո՞վ է գրի և գրականության աստվածը հայոց հին դիցարանում: 0,5 մ.
12. Ո՞վ է հայ նախարարների կողմից հռչակվել մարզպան Վահանանց ապստամբության ժամանակ: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Անկարայի թուրք-ֆրանսիական պայմանագիրը
    բ/ Կարմիր բանակի հրամանատար Դրոյի հեռացումը Հայաստանից
    գ/ Խորհուրդների առաջին ընտրությունների անցկացումը ՀՍԽՀ-ում
    դ/ Կարմիր բանակի մուտքը Թիֆլիս և Վրաստանի խորհրդայնացումը
    ե/ Համազանգեզուրյան II համագումարը
    զ/ Ալ. Մյասնիկյանի ու Բ. Մդիվանու կողմից հայ-վրացական համաձայնագրի ստորագրումը
    է/ Կարսի պայմանագրի ստորագրումը
    ը/ Մոսկվայի պայմանագրի կապակցությամբ ՀՍԽՀ բողոքի ներկայացումը
    թ/ Ապստամբության սկիզբը Լոռիում և խորհրդային բանակի մուտքը Լոռի

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Շամքորի ճակատամարտ	2. Կարս	3. Լոռի-Փամբակ
4. Բայազետ	5. Թիֆլիս	6. Շամշադին
ա. Հովհաննես Լազարև	բ. Արշակ Տեր-Ղուկասով	գ. Գրիգոր Մանուչարյան
դ. Վալերիան Մադաթով	ե. Մարտիրոս Վեքիլյան	զ. Արմեն Գարո

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ 58 թ. Կորբուլոնը գրավել է Տիգրանակերտը, ապա շարժվել դեպի Արտաշատ:
    բ/ 413-419 թթ. Շապուհը կառավարել է որպես Հայոց թագավոր:
    գ/ 804 թ. Աշոտ Մսակերը պաշտոնապես ճանաչվել է Հայոց իշխանաց իշխան:

դ/ Հայոց գիրը ստեղծելու համար Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ ճանապարհ է ընկել դեպի Ամիդ, Ալեքսանդրիա, Սամոսատ քաղաքներ:
ե/ 1064 թ. Տուղրիլ բեկը ներխուժել է Հայաստան:
զ/ 1236 թ. մոնղոլական արշավանքի ժամանակ անեցիները 12 օր դիմադրել են թշնամուն, որից հետո քաղաքն ընկել է:
է/ Զարգացած միջնադարում Հայաստանի բարձրագույն դպրոցներում ուսումը տևում էր 7-8 տարի:
ը/ Երևանի արհեստական կաուչուկի գործարանը սկսել է արտադրանք տալ 1940 թ.:
թ/ 1938 թ. հունիսին Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքում ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար է դարձել Գրիգոր Հարությունյանը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Պալեոլիթը նշանակում է միջին քարի դար:
բ/ Բյուր նշանակում է հազար:
գ/ «Գանձագին» էին կոչվում այն հողերը, որոնք առուվաճառքի ենթակա չէին:
դ/ Հորից որդուն ժառանգաբար անցնող հողերը կոչվում էին «հայրենիք»:
ե/ Պետական պաշտոնյաներին ու զինվորականներին ծառայության դիմաց տրվող հողերը կոչվում էին «պարգևականք»:
զ/ Սենեկապետը թագավորի պահակազորի ղեկավարն էր:
է/ Հազարապետը ղեկավարում էր արքունիքի արտաքին հարաբերությունները:
ը/ Ոստանիկները ղեկավարում էին աշխարհազորը պատերազմների ժամանակ:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ 447 թ. Հայաստան է ժամանել պարսիկ պաշտոնյա Դենշապուհը:
բ/ Խաղխաղի ճակատամարտից հետո հայերը գրավել են Ճորա պահակը:
գ/ 652 թ. Թեոդորոս Ռշտունին կնքել է պայմանագիր Ասորիքի ու Հարավային Միջագետքի կառավարիչ Մուավիայի հետ:
դ/ 987 թ. հռչակվել է Սյունիքի թագավորությունը:
ե/ 1322 թ. մամլուքները կարողացել են գրավել Այասը:
զ/ 1729-1731 թթ. թուրքական նվաճման դեմ պայքարը շարունակում էր Շուշիի սղնախը:
է/ Հայաստանի ազատագրության «Հյուսիսային» ծրագիրը բաղկացած էր 18 կետերից:
ը/ Հայաստանի խորհուրդն ուներ 46 պատգամավորներ:
թ/ 1921 թ. Իրաքից Հայաստան են եկել 5000 մարդիկ:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

XI դ. սկզբում Վասպուրականում կային 8 քաղաք, 72 վանք, հազարավոր գյուղեր:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանի ելույթից
(«Սովետական Հայաստան», 1946թ., 3 փետրվարի)

«... Մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդու: Այնինչ ցանկացողները ավելի շատ են: Մենք ինչպե՞ս պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից զավթած հայկական մարզերը»:

«... Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին: Իսկ նրանց մերժելու մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք: Դա է ներկայումս Թուրքիայի ձեռքերում գտնվող հայկական մարզերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի այժմեականությունը: Մենք հաստա-

տակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, նկատի առնելով նրա այժմեականությունը»:

ա. Տեքստում հիշատակվող Թուրքիայից վերադարձվելիք տարածքների պարագայում ո՞ր երկու հայկական շրջանների մասին է խոսքը:
բ. Ո՞ր պատերազմի ժամանակ էին վերոնշյալ շրջանները գրավվել թուրքերի կողմից:
գ. Որքա՞ն հայեր են հայրենադարձվել 1946-1948 թթ.:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
775 թ. գարնանը Արաբական խալիֆայությունը հայ ապստամբ նախարարների դեմ ուղարկում է …(1)-հազարանոց զորք, որը գալիս է Հայաստան և բանակում …(2)-ում: Շուտով տեղի է ունենում …(3)-ի ճակատամարտը, որտեղ հայկական կողմը տալիս է 1500 զոհ:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6800 տարեկան է, կոնկրետ ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Իրանական պետական ո՞ր կազմավորումն էր նրա հարավային հարևանը:

23. Ո՞ր եկեղեցու բարձրաքանդակներից է բերված ստորև պատկերում տրված արքայաքանդակը. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր քաղաքում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունն է ներկայացված 1905 թ. ֆրանսիական այս ծաղրանկարում:
բ. Նշե՛ք ևս մեկ քաղաք, որտեղ նույն թվականին տեղի են ունեցել նմանատիպ իրադարձություններ:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Քանի՞ նշաններից է բաղկացած եգիպտական գիրը (հիերոգլիֆը). 0,5 մ.
ա/ 500 բ/ 600 գ/ 700 դ/ 800
2. Ո՞վ է հին հույների ընտանիքի և մայրության աստվածը. 0,5 մ.
ա/ Հերա բ/ Ափրոդիտե գ/ Արտեմիս դ/ Յունոնա
3. Ե՞րբ են Հռոմի բոլոր ազատ բնակիչները ճանաչվել քաղաքացի. 0,5 մ.
ա/ 12 թ. բ/ 161 թ. գ/ 212 թ. դ/ 330 թ.
4. Ֆրանսիական ո՞ր քաղաքն են գրավել անգլիացիները 1415 թ. 0,5 մ.
ա/ Օռլեան բ/ Փարիզ գ/ Լիոն դ/ Մարսել
5. Ո՞վ է եղել Հուստինիանոս I կայսեր կինը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Համմուրապի 2. Թութմոս III 3. Սարգոն 4. Ռամզես II
ա. Ք.ա. 1279-1213 թթ. բ. Ք.ա. 1792-1750 թթ. գ. Ք.ա. 2330-2295 թթ. դ. Ք.ա. 1467-1413 թթ.

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ցին Շի Հուանդի կայսրը, նվաճելով Չինաստանից արևմուտք ընկած շրջանները, առևտրական ճանապարհ է գցել դեպի Իրան:

բ/ Վասիլ I-ը կազմել է օրենքների նոր ժողովածու՝ բաղկացած 60 գրքերից:

գ/ Օտտոն I-ը 955 թ. պարտության է մատնել հունգարներին:

դ/ 1238 թ. Ֆրիդրիխ II-ը կազմակերպել է խաչակրաց VI արշավանքը:

ե/ 1519-1521 թթ. Ֆերնան Մագելանի արշավախումբը կատարել է ծովային առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը:

զ/ Չարլզ I-ի հրավիրած խորհրդարանը գործել է 1640-1660 թթ.:

է/ Ֆրանսիացի Շ. Մոնտեսքյոն սահմանադրական միապետության կողմնակից էր:

ը/ 1926 թ. Իռլանդիային տրվել է դոմինիոնի կարգավիճակ:

1	2	3

8. Թվարկում և ընտրանք. 2 մ. (4 X 0,5 մ.)

ա. Թվարկե՛ք հին հռոմեական քաղաքակրթության ձևավորման ժամանակ Ապենինյան թերակղզում բնակվող 2 ժողովուրդներ կամ ցեղ(ախմբ)եր,

բ. Տրվածներից ընտրե՛ք Հին Հռոմի մշակույթի գործիչներից 2-ին. Հռոմուլոս, Սեպտիմիոս Սևերոս, Սերվիոս Տուլիոս, Տարքվինիոս, Վերգիլիոս, Վիտրուվիոս, Օկտավիանոս, Հռեմոս, Սոկրատես, Պլատոն:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



ա. 18-19-րդ դարերի ո՞ր պետությունն է գունանշված կենտրոնում:

բ. Ո՞ր պետության ստեղծման կորիզը (միջուկը) դարձավ այն:

10. Հին Հունաստանի նշանավոր ո՞ր գործչի կիսանդրին է պատկերված. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞վ է աջ կողմում պատկերված ձեռք սեղմող անձը:

բ. Նշե՛ք, թե որ պետության դեմ էր ուղղված ռազմաքաղաքական այս դաշինքի ձևավորումը (նշե՛ք կոնկրետ մեկ երկիր, հակառակորդ դաշինքի տարբեր երկրների ներկայացումը որպես ճիշտ պատասխան չի ընդունվելու):

գ. Ո՞ր պետությունն է բացակայում ռազմաքաղաքական դաշինքը խորհրդանշող այս նկարում:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

06.03.2024 թ.